



**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
ԱՎՏՈՏԵԽՆՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-17/2**

**21** նոյեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմն ի դեմս աշխատակազմի ղեկավար **Նունե Խաչատրյանի**, որը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս **Ընկերության տնօրեն Վ. Բաղդասարյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է իսկ Կատարողը ստանձնում է **ավտոտեխսպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2145000 (երկու միլիոն հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն<sup>1</sup>:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

<sup>1</sup> Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով<sup>2</sup>:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:<sup>3</sup>

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

<sup>2</sup> Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար փվյալ փարվա ընթացքում հարկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

<sup>3</sup> Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 (չորս) էջից, կնքվում և, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**


ՀՀ արդարադատության նախարարության  
աշխատակազմ

Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8

ՀՀ ֆինանսների նախարարության  
գործառնական վարչություն

ՀՀ 90807194187

ՀՀ 02906294



(ստորագրություն) Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Մ-ԲԻ-Ո» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան 22/4

«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 220083335012000



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ\*

«Որամ»

հրավերի նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված քանակը	Գնման առարկայի անվանումը	տեխնիկական բնութագիրը		չափման միավոր	Միավոր ծախսային գինը/Հրամ	Ընդհանուր Չափաբաժնի գինը/Հրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
								հասցեն	Ժամկետ	
1	5011130/10	1- Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ԳԱՀ3110 00, 015 SS 03, 2000թ.)	Անվաղողերի փոխարինում	2000թ. արտադրության ԳԱՀ 311000 մակնիշի ավտոմեքենայի անվաղողերի փոխարինման ծառայություններ՝ ներառյալ փոխարինվող անվաղողերի /4 հատ ձմեռային/, հավասարակշռման, տեղադրման արժեքը: Անվաղողերը պետք է լինեն նոր, Cordiant կամ Amtel Ֆիրմայի արտադրության կամ համարժեքը: Անվաղողերի չափսը՝ 195/65/15՝ Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:		64000	195000 (մեկ հարյուր իննսուներեք հազար)	1	բ. Երևան	
			Կոնուսի գլխավոր բաքի փոխարինում	2000 թվականի արտադրության ԳԱՀ 3110 մակնիշի ավտոմեքենայի կոնուսի գլխավոր բաքի փոխարինման ծառայություններ՝ ներառյալ փոխարինվող բաքի և տեղադրման արժեքը: Բաքը պետք է լինի նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության, կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:	որամ	5000				

Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.

		<p>Ջրի մղիչի փոխարինում</p> <p>2000թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի ջրի մղիչի փոխարինման ծառայություններ՝ ներառյալ փոխարինվող մղիչի և տեղադրման արժեքը: Մղիչը պետք է լինի նոր, գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		7000	
		<p>Շարժիչի մոմիկի փոխարինում</p> <p>2000թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի շարժիչի/շարժիչի աշխ. ծավալը՝ 2.0/ մոմիկների /4 հատ/ փոխարինման ծառայություններ (ներառյալ փոխարինվող մոմիկները): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն օրիգինալ BOSCH (Platinium) ֆիրմայի կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		4000	
		<p>Առջևի ընթացքային մասի գնդաձև ձգանների փոխարինում</p> <p>2000թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի առջևի ընթացքային մասի գնդաձև ձգանների /ԴՅԳԶ/ փոխարինում /2 հատ, կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		6000	
		<p>Առջևի արգելակման կոճղակների փոխարինում</p> <p>2000թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի առջևի արգելակման կոճղակների փոխարինում (ներառյալ փոխարինվող կոճղակները): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		7000	



			Շարժիչի յուղի փոխարինում	2000թ. արտադրության ԳԱՀ 311000 մակնիշի ավտոմեքենայի շարժիչի յուղի փոխման ծառայություններ (ներառյալ փոխարինվող յուղը և յուղի ֆիլտրը): Փոխարինվող յուղը պետք է լինի Shell10/40 ֆիրմայի կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում երկու անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:	40000				
			/Конусной вилка/	2000թ. արտադրության ԳԱՀ 311000 մակնիշի ավտոմեքենայի конусной вилка-ի փոխարինում: Փոխարինվող պահեստամասերը պետք լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:	3000				
			Գեներատորի/динамо / փոխարինում	2000թ. արտադրության ԳԱՀ 311000 մակնիշի ավտոմեքենայի գեներատորի փոխարինում (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Պահեստամասերը պետք է լինեն նոր, ֆիրմայի արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:	21000				
			Шарни-ների փոխարինում	2000թ. արտադրության ԳԱՀ 311000 մակնիշի ավտոմեքենայի шарни-ների փոխարինման ծառայություններ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը) Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:	5000				
2	5011130/11	2- Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ԳԱՀ311000, 143 SS 03, 2000թ.)	Անվազողների փոխարինում	2000թ. արտադրության ԳԱՀ 311000 մակնիշի ավտոմեքենայի անվազողների փոխարինման ծառայություններ՝ ներառյալ փոխարինվող անվազողների /4 հատ ձմեռային/, հավասարակշռման, տեղադրման արժեքը: Անվազողները պետք է լինեն նոր, Cordiant կամ Arntel ֆիրմայի արտադրության կամ համարժեքը: Անվազողների չափեր՝ 195/65/15: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:	64000	195000 (մեկ հարյուր իննսուներեք հազար)	1	Ք. Երևան	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.
				դրամ					

	Աղջկի ընթացքային մասի գնդաձև փոխարինում	<p>2000թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի առջևի ընթացքային մասի գնդաձև ձգանների /тара/ փոխարինում /կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		5000	
	Կախոցների (амортизатор) փոխարինում (կոմպլեկտ)	<p>2000թ. Արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի առջևի ընթացքային մասի կախոցների (амортизатор) փոխարինում (ներառյալ փոխարինվող կախոցների արժեքը): Փոխարինվող կախոցները պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		13000	
	Գեննրատրի /динамо/ փոխարինում	<p>2000թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի դինամոյի փոխարինում: Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		31000	
	Շարժիչի յուղի փոխարինում	<p>2000թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի շարժիչի յուղի փոխման ծառայություններ (ներառյալ փոխարինվող յուղը և յուղի ֆիլտրը): Փոխարինվող յուղը պետք է լինի Shell 10/40 ֆիլմայի կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում երկու անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		40000	
	Шкворни-ների փոխարինում	<p>2000թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի шкворни-ի փոխարինում: Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		8000	

			Առջևի արգելակման կոճղակների փոխարինում	2000թ. արտադրության ԳԱՀ 311000 մակնիշի ավտոմեքենայի առջևի արգելակման կոճղակների փոխարինում (ներառյալ փոխարինվող կոճղակները): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:		8000			
			Ղեկային համակարգի փոխարինում	2000թ. արտադրության ԳԱՀ 2311000 մակնիշի ավտոմեքենայի ղեկային համակարգի փոխարինման ծառայություններ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:		26000			
3	5011130/12	3-Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ԳԱՀ 2311000, 037 SS 03, 1998թ.)	Անվաղողների փոխարինում	1998թ. արտադրության ԳԱՀ 311000 մակնիշի ավտոմեքենայի անվաղողների փոխարինման ծառայություններ՝ ներառյալ փոխարինվող անվաղողների /4 հատ ձմեռային/, հավասարակշռման, տեղադրման արժեքը: Անվաղողերը պետք է լինեն տոր. Cordiant կամ Amtel ֆիրմայի արտադրության կամ համարժեքը: Անվաղողների չափսը՝ 195/65/15: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:	դրամ	54000	195000 (մեկ հարյուր իննսուսհինգ հազար)	Բ. Երևան	
			Առջևի արգելակման կոճղակների փոխարինում	1998թ. արտադրության ԳԱՀ 311000 մակնիշի ավտոմեքենայի առջևի արգելակման կոճղակների փոխարինում (ներառյալ փոխարինվող կոճղակները): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:		8000			

Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.





		<p>Առջևի արգելակման կոճղակների փոխարինում</p>	<p>2000թ. արտադրության ԳԱԶ 3102 մակնիշի ավտոմեքենայի առջևի արգելակման կոճղակների փոխարինում (ներառյալ փոխարինվող կոճղակները): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		<p>8000</p>	
		<p>Ղեկային համակարգի հիդրոուժեղացուցիչի / рулевой колонка / փոխարինում</p>	<p>2000թ. արտադրության ԳԱԶ 3102 մակնիշի ավտոմեքենայի ղեկային համակարգի հիդրոուժեղացուցիչի рулевой колонка/ փոխարինման ծառայություններ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		<p>35000</p>	
		<p>Առջևի ընթացքային մասի գնդաձև ձգանների փոխարինում</p>	<p>2000թ. արտադրության ԳԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի գնդաձև ձգանների /тара/ փոխարինում /2 հատ, կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		<p>6000</p>	
		<p>Դիմացի, հետևի ընթացքային մասերի, կախոցների, ստաբիլիզատրի ռեզինների (կոմպլեկտ) փոխարինում</p>	<p>2000թ. արտադրության ԳԱԶ 3102 մակնիշի ավտոմեքենայի առջևի, հետևի ընթացքային մասերի, կախոցների, ստաբիլիզատրի ռեզինների (կոմպլեկտ) փոխարինում (ներառյալ փոխարինվող ռեզինները): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		<p>4000</p>	



			<p>Փոխանցման տուփի փոխարինում</p> <p>2000թ. արտադրության ՎԱԶ 3102 մակնիշի ավտոմեքենայի փոխանցման տուփի փոխարինման ծառայություն՝ հինգ աստիճան փոխանցման տուփով (ներառյալ հինգ աստիճան փոխանցման տուփի արժեքը): Փոխարինվող փոխանցման տուփը պետք է լինի ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>			75000		
			<p>Գնդաձև ձգանների փոխարինում</p> <p>2000թ. արտադրության ՎԱԶ 21213 մակնիշի ավտոմեքենայի գնդաձև ձգանների /թաթ/ փոխարինում /2 հատ, կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>			39000		
			<p>Ղեկային համակարգի (Рулевая колонка) փոխարինում</p> <p>2000թ. արտադրության ՎԱԶ 21213 մակնիշի ավտոմեքենայի ղեկային համակարգի (Рулевая колонка) փոխարինման ծառայություններ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>			27000		
6	5011130/15	6-Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ՎԱԶ 21213, 034 SS 03 2000թ.)	<p>Անվադողերի փոխարինում</p> <p>2000թ. արտադրության ՎԱԶ 21213 մակնիշի ավտոմեքենայի անվադողերի փոխարինման ծառայություններ՝ ներառյալ փոխարինվող անվադողերի /4 հատ ծմեռային/, հավասարակշռման, տեղադրման արժեքը: Անվադողերը պետք է լինեն նոր, Cordiant կամ Amtel ֆիրմայի արտադրության կամ համարժեքը: Անվադողերի չափսը՝ 185/75/16: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>	դրամ	44000	195000 (մեկ հարյուր իննսուներեք հազար)	Բ. Երևան	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.

		<p>Կախոյնների (амортизатор) փոխարինում (կոմպլեկտ)</p>	<p>2000թ. Արտադրության ՎԱԶ 311000 մակնիշի ավտոմեքենայի ընթացքային մասի կախոյնների (амортизатор)՝ զույգ. փոխարինում (ներառյալ փոխարինվող կախոյնների արժեքը): Փոխարինվող կախոյնները պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		8000	
		<p>Գնդաձև ձգանների փոխարինում</p>	<p>2000թ. արտադրության ՎԱԶ 21213 մակնիշի ավտոմեքենայի գնդաձև ձգանների /ռաթ/ փոխարինում /2 հատ. կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		8000	
		<p>Առջևի ընթացքային մասի գնդաձև ձգանների փոխարինում</p>	<p>2000թ. արտադրության ՎԱԶ 21213 մակնիշի ավտոմեքենայի գնդաձև ձգանների /ռաթ/ փոխարինում /2 հատ. կոմպլեկտ/ (ներառյալ փոխարինվող պահեստամասերը): Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր, ավտոմեքենայի գործարանային արտադրության կամ համարժեքը: Ծառայությունը պետք է մատուցվի 2017 թվականի ընթացքում մեկ անգամ՝ ըստ պատվիրատուի ներկայացված պահանջի:</p>		7000	
